ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 նոյեմբերի 2021թ. թիվ 748-Ա

Գ. ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 29-րդ հոդվածի 7-րդ կետի և 95-րդ հոդվածի 1-ին կետի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի թիվ 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետը և հաշվի առնելով «ՀՀ Լոռու մարզի Ճոճկանի Գոռ Խուդինյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի նախագահի 2021 թվականի նոյեմբերի 17-ի գրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Գնել Էդիկի Խաչատրյանին վերանշանակել «ՀՀ Լոռու մարզի Ճոճկանի Գոռ Խուդինյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում և նրա հետ 2017 թվականի հունվարի 16-ին կնքած աշխատանքային պայմանագրի ժամկետը երկարաձգել հինգ տարի ժամկետով՝ մինչև 2027 թվականի հունվարի 17-ը ներառյալ:

2. Գ.Խաչատրյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

11/18/2021

X

ԳՈՌ ԱՍՐՅԱՆ

Գ.ԱՍՐՅԱՆ

2021թ. նոյեմբերի 18
ք.Վանաձոր